

## ԶՕՀՐԱՊԻ ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

(Համառոտ ակնարկ Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻԻ)

Գրիգոր Զօհրապ, 1861ին Պէշիքթաշի մէջ ծնած, իր նախնական ուսումը ստացած է Պէշիքթաշի Մաքրուհեան<sup>1</sup> եւ Օրթաքէօյի Թարգմանչաց ու Լուսաւորչեան վարժարաններուն մէջ:

«Ոչ հայերէն լեզուն լաւ սորված եմ, կ'ըսէ Զօհրապ, ոչ ալ հայ գրականութեան մասին հմտութիւն ունիմ. ինչպէս այս գրականութեան մէջ մուտք ունեցեր եմ, ես ալ չեմ գիտեր լաւ մը»:

14 տարեկանին Չափագիտական վարժարան<sup>2</sup> մտած, 18 տարեկանին աւարտած է զայն:

Իր հրապարակագրական գործունէութիւնը կը սկսի 1878ին, *Լրագիր* օրաթերթին մէջ, ուր խմբագրականներ գրած է<sup>3</sup>: Յիշատակելի է իր գրավէճը Մինաս Չերագի հետ՝ Պերլինի քօնկրեին շուրջ<sup>4</sup>:

Հրապարակագրական գործունէութիւնը շարունակած է *Երկրագունտի* մէջ՝ ազգային եւ գրական յօդուածներու շարքով մը, որուն մէջ ուշագրաւ է *Չինական նամականին*<sup>5</sup>:

Տիկին Սրբուհի Տիսաբի *Մայտաին*<sup>6</sup> առիթւ սուր գրավէճ մը ունեցած է Ռ. Յ. Պէրպէրեանի հետ<sup>7</sup>:

Զօհրապ անցնելով Արփիար Արփիարեանի *Մասիսին*, հրատարակած է հոն իր առաջին վէպը՝ *Անհետացած սերունդը*<sup>8</sup>, – «ողորմելի վէպ մը, ինչպէս կ'ըսէ ինք, որ ոսմանթիք եւ բնապաշտ ձգտումներու յիմար խառնուրդ մըն է»:

Յետոյ սկսած է իր նորավէպերու շարքը *Մասիսի* եւ *Արեւելքի* մէջ, յաջորդաբար հրատարակելով *Ներսէսը*, *Արմենիսան*, եւ ուրիշներ:

Այդ միջոցներուն հրատարակած է յօդուածաշարք մը թերթեւ երգիծանքի՝ օրուան մարդոց եւ ազգային գործերու վրայ, *Ուղեւորութիւն յիշատակներուս մէջ*<sup>9</sup> տիտղոսով: